

ԱՄՐԱԿՑՎԱԾ ՑԱՆՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԼԱՄԱՆՆԵՐ

1. Սույն՝ ամրակցված կապուղով հանրային էլեկտրոնային հաղորդակցության եւ հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ») սահմանում են «ՎիվաՍել-ՄՏՄ» և այլ ապրանքային նշանների ներքո գործող «ՄՏՄ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (ստորև՝ «Օպերատոր») կողմից ամրակցված կապուղով հանրային էլեկտրոնային հաղորդակցության եւ հարակից այլ ծառայությունների (այսուհետ՝ «Ծառայություններ») մատուցման ընդհանուր պայմանները:
2. Բոլոր այն դեպքերում երբ որոշակի վերաբերելի եւ կիրառելի իրավահարաբերության կամ խնդրի կարգավորում ուղղակիորեն սահմանված չէ Պայմաններով, ապա Ծառայության բաժանորդագրության պայմանագրի կողմերը պետք է առաջնորդվեն Օպերատորի՝ Շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման Ընդհանուր Պայմաններով՝ այնքանով, որքանով դրանք կլինեն կիրառելի եւ իրենց բնույթով չեն հակասի Ծառայությունների մատուցմանը եւ դրա պայմաններին:
3. Օպերատորի գովազդը կամ այլ կերպ Ծառայությունների ներկայացումը Պայմանների և որոշակի սպասարկման պլանի պայմանների համաձայն Ծառայություններին բաժանորդագրվելու օֆերտա (առաջարկ) կատարելու հրապարակային հրավեր է:
4. Բաժանորդագրման օֆերտան համարվում է Օպերատորի կողմից ակցեպտավորված (հաստատված) Ծառայություններն ակտիվացնելու պահից, և այդ պահից օֆերտան և Պայմանները, համապատասխան սպասարկման պլանի պայմանների, ինչպես նաեւ համապատասխան բաժանորդագրության հայտի հետ մեկտեղ, կազմում են Օպերատորի եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդի (այսուհետ՝ «Բաժանորդ») միջեւ կնքված, կատարման համար պարտադիր պայմանագիր:
5. Օպերատորը, Պայմանները սահմանելու պահին, ամրակցված ցանցով հնարավորություն ունի մատուցելու եւ մատուցում է ինտերնետ հասանելիության, տվյալների հաղորդման եւ համապատասխան լիցենզավորված իրավատերերի (ներկայացուցիչների) կողմից հեռուստառադիոհեռարձակման/վերահեռարձակման ծառայություն ստանալու ապահովման, ֆիքսված (IP) ծայնային տվյալների փոխանցման ծառայություններ, ինչպես նաեւ հոսթինգի ծառայություններ, ինչից ելնելով էլ սահմանվել են Պայմանները: Ծառայությունների բովանդակությունն ընդլայնվելու (Պայմաններով նախատեսվածի շրջանակում նոր ծառայությունների տեսակների մատուցման) դեպքում Օպերատորը եւ Բաժանորդը (այսուհետ՝ նաեւ «Կողմեր») Պայմանների դեռեւս փոփոխված չլինելու կամ նոր համապատասխան պայմաններ Օպերատորի կողմից սահմանված չլինելու դեպքում կառաջնորդվեն Պայմաններով դրանց կիրառելիության սահմաններում, եթե այլ բան չսահմանվի Օպերատորի կողմից:
6. Հիմք ընդունելով Պայմանների 5. կետով նախատեսվածը Կողմերը գիտակցում են, որ Պայմանների որոշակի դրույթներ կարող են իրենց բնույթով կիրառելի չլինեն Ծառայությունների որոշակի տեսակի համար՝ կիրառելի լինելով մյուսների համար, եւ՝ հակառակը, ուստի եւ համապատասխան սակագնային պլանով, ինչպես նաեւ բաժանորդագրության հայտով Պայմաններից տարբեր պայմաններ նախատեսված լինելու դեպքում վերջիններս կգերակայեն Պայմանների նկատմամբ:
7. Օպերատորի կողմից նախատեսված դեպքերում՝ Ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի կողմից նշված երրորդ անձանց կողմից կամ միջոցով: Բացի այդ, Օպերատորը հնարավորություն է ընձեռում երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները Բաժանորդին հասանելի դարձնելու համար՝ նման երրորդ անձանց հետ հարաբերություններում հանդես գալով որպես Բաժանորդի գործակալ, որը գործում է իր անունից, սակայն Բաժանորդի հաշվին եւ հանձնարարությամբ:
8. Ծառայությունների նկարագրությունը, դրանց նկատմամբ կիրառելի սակագները, պայմանները եւ կանոնները սահմանվում են Օպերատորի կողմից:
9. Օպերատորի կողմից Ծառայությունները մատուցվում են ամրակցված էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (այսուհետ՝ նաեւ «ցանց») միջոցով դրա առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում: Օպերատորը պատասխանատու չէ մատուցվող Ծառայությունների ընդհատման հետևանքով Բաժանորդի կրած ուղղակի կամ անուղղակի վնասների (բաց թողնված օգուտի) համար, ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով՝ եկամտի, շահույթի, ապրանքի կամ այլ անուղղակի կորուստների, անկախ այն հանգամանքից՝ կարող էր Կատարողը կանխատեսել նման կորուստների հնարավորությունը, թե ոչ:
10. Օպերատորը՝ ցանցի խափանումների համար պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ խափանումը տեղի է ունեցել Բաժանորդի կողմից տնօրինվող տարածքում կապուղիների կամ էլեկտրոնային հաղորդակցության ապահովման համար տեղադրված Բաժանորդային սարքավորումների (անկախ դրանց պատկանելիությունից) խափանումների պատճառով, ինչպես նաև այն դեպքերում, երբ վնասվել են էլեկտրոնային հաղորդակցության ապահովման համար Օպերատորի կողմից վարձակալված կապուղիները:
11. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների մատուցման շրջանակում եւ դրանց ընթացքում Բաժանորդի հասցեով ստացված, ինչպես նաև ուղղակի կամ անուղղակի ճանապարհներով նրան հասած կամ նրա կողմից ուղարկված տեղեկատվության համար, ինչպես նաև Օպերատորը Ծառայությունների մատուցման շրջանակներում եւ ընթացքում պատասխանատու չէ Բաժանորդի լրկալ ցանցի նկատմամբ համաշխարհային ցանցի այլ բաժանորդների կողմից կատարված ոտնձգությունների համար:
12. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի գործողությունների, նրա ցանցին միացված սարքավորումների, համակարգչային վիրուսների կամ Բաժանորդի ցանցի ոչ ճիշտ կարգավորման/կարգաբերման հետևանքով Ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած տրաֆիկի և որակի անկման համար: Կողմերը գիտակցում են, որ Ծառայությունների մատուցման ընթացքում ինտերնետ հասանելիության ապահովման մասով Օպերատորի հսկողությունից դուրս է գտնվում ինտերնետային ցանցը, ուստի եւ դրա հետ կապված Օպերատորը որեւէ երաշխիք տրամադրել չի կարող վերջինիս որակի, հասանելիության եւ կայունության համար:

13. Այլ բան սահմանված չլինելու դեպքում, Ծառայությունները մատուցվում են շուրջօրյա, առանց ընդհատումների, տարվա բոլոր օրերին: Ծառայությունների մատուցումը կարող է սահմանափակվել կամ ընդհատվել վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման ժամանակ, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է տեղեկացնի Բաժանորդին հրապարակային հայտարարություններ անելու միջոցով: Ծառայությունների մատուցումը կարող է ընդհատվել կամ Ծառայությունների որակը կարող է վատթարանալ տեխնիկական խափանումների դեպքում: Օպերատորը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ առաջացած տեխնիկական խափանումները վերացնելու համար:
14. Ծառայությունների ստացման հնարավորությունը, դրանց տեխնիկական եւ/կամ որակական հատկանիշները կարող են կախված լինել Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, այդ թվում՝ Բաժանորդային Սարքավորման որակից եւ տեխնիկական առանձնահատկություններից, այլ օպերատորների ցանցերի անկանոն աշխատանքից, հեռարձակման/վերահեռարձակման ծառայություն մատուցողների կողմում առկա տեխնիկական խնդիրներից, սարքավորումների նորմալ շահագործմանը խոչընդոտող հանգամանքներից եւ այլ երեւոյթներից:
15. Մատուցվող ծառայությունների ծավալը կարող է սահմանափակվել Օպերատորի կողմից՝ Պայմանների եւ Օպերատորի կողմից սահմանված այլ կանոնների համաձայն:
16. Բաժանորդին մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի կողմից, այդ թվում՝ այլ ծառայություններ մատուցողների կողմից Օպերատորին ներկայացված տվյալների հիման վրա (այսուհետ՝ «Բիլինգային համակարգ»):
17. Օպերատորը պարտավոր չէ 3 (երեք) ամսից ավել պահպանել մատուցված Ծառայությունների մասին տեղեկատվությունը:
18. Օպերատորը պարտավոր է համապատասխան Ծառայությունների մատուցումը սկսել (Ծառայությունների մատուցման ապահովման աշխատանքները) համապատասխան հայտի՝ Բաժանորդի կողմից ստորագրման հաջորդ աշխատանքային օրվանից, եթե համապատասխան հայտով կամ սակագնային պլանով այլ բան նախատեսված չէ կամ Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված:
19. Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված սպասարկման պլանի (փաթեթի) համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք ներկայացվում են Օպերատորի սպասարկման կենտրոններում:
20. Ծառայությունների բաժանորդագրման դեպքում, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան հայտով կամ սակագնային պլանով, Ծառայությունների դիմաց կարող է սահմանվել երկու տեսակի վճարում՝ (i) միանվագ (միացման, վերամիացման, տեղակայման եւ այլն) եւ (ii) ամսական: Եթե այլ բան սահմանված չէ համապատասխան հայտով կամ սակագնային պլանով միանվագ վճարը Բաժանորդի կողմից իրականացվում է համապատասխան հայտը կնքելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ամսական վճարումները՝ Ծառայությունների մատուցման համապատասխան ամսվա համար Օպերատորի Բիլինգային համակարգի դուրս բերած հաշվետվությունը (եւ համապատասխան հաշիվը) ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, սակայն յուրաքանչյուր դեպքում՝ մինչեւ հաշվետու ամսվան հաջորդող ամսի 15-ը:
21. Բաժանորդը պարտավոր է ստուգել եւ Օպերատորին զրավոր հայտնել ամսական հաշիվներում տեղ գտած անհամապատասխանությունների մասին՝ Ծառայությունների մատուցման համապատասխան ամսվա ավարտից հետո 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում, եւ եթե սահմանված ժամկետում Բաժանորդը որեւէ անհամապատասխանության մասին չի հայտնել Օպերատորին, ապա հաշիվը համարվում է Բաժանորդի կողմից անվերապահորեն հաստատված եւ ընդունված, եւ Օպերատորը չի ընդունի այդ հաշիվի ժամանակահատվածին վերաբերող որեւէ հետագա պահանջներ եւ առարկություններ:
22. Ծառայության որոշակի տեսակների համար Օպերատորը կախված Ծառայության տվյալ տեսակի առանձնահատկություններից կարող է պահանջել համապատասխան սակագնային պլանով նախատեսվածից ավելի չափով վճար, ինչը կարող է կախված լինել օրինակ. ինտերնետ համակցման ծառայությունների մատուցման ընթացքում Բաժանորդի կողմից նախապես հայտարարված երկարությունից ավելի մալուխի անցկացման անհրաժեշտությամբ, արդեն իսկ տեղակայված սարքավորման լրացուցիչ հասցեափոխման եւ/կամ այլ նմանատիպ բազմափսի հանգամանքներով: Յուրաքանչյուր դեպքում, ցանկացած՝ սակագնային պլանից կամ պատվեր հայտով նախատեսվածից ավելի վճարի պահանջ պետք է լինի պատճառաբանված եւ հիմնավորված, եւ ենթակա կլինի վճարման այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
23. Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից վճարման համար պատշաճ կերպով լիազորված եւ այդ լիազորության իրականացման նպատակով վերջինի անունից եւ համար գործող:
24. Օպերատորն իրավունք ունի սեփական հայեցողությամբ ԱՄՆ դոլարով ինդեքսավորել ժամկետանց վճարումների գումարները:
25. Բաժանորդը վճարումները կատարում է կանխիկ կամ փոխանցումով:
26. Օպերատորը իրավունք ունի Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների խախտման դեպքում (այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ որեւէ վճարման ուշացման դեպքում) միակողմանի կասեցնել Ծառայությունները (դրանց մասը), դադարեցնել Ծառայությունների մատուցումը կամ կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների նկատմամբ՝ առանց որեւէ զգուշացման, ինչպես նաեւ կիրառել պատասխանատվության այլ՝ սպասարկման պլանով կամ Օպերատորի կողմից սահմանված այլ կանոններով, ինչպես նաեւ օրենքով նախատեսված միջոցներ:
27. Ծառայությունների նկատմամբ կարճաժամկետ սահմանափակում կարող է կիրառվել Օպերատորի կողմից նաեւ տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով: Նման սահմանափակման կարգը եւ ժամկետները Օպերատորի կողմից սահմանվում են Ծառայությունների տվյալ տեսակի համար սահմանված տեխնիկական սպասարկման համաձայնագրով (եթե կիրառելի է):

28. Օպերատորը ինքնուրույն է սահմանում եւ փոփոխում սակագնային պլանները, Ծառայությունների ցանկը, դրանց մատուցման պայմանները, սակագները եւ կանոնները:
29. Բաժանորդի կողմից ստացվող Ծառայությունների մատվ սակագնային պլանում կամ այլ փոփոխության դեպքում Օպերատորը Բաժանորդին այդ մասին հայտնում է նախապես՝ 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:
30. Ծառայությունների մատուցման որոշակի սակագնային պլանների շրջանակում կարող է նախատեսվել նաեւ Օպերատորի կողմից Բաժանորդին որոշակի սարքավորման (այդ թվում՝ վերջնակետային) հանձնում, ինչպես նաեւ մալուխի անցկացում/տեղադրում, որի մասին վերջինս պարտավոր է հոգ տանել ինչպես իր սեփականի, չկատարի ծրագրային եւ/կամ ապարատային փոփոխություններ եւ սահմանված համապատասխան ժամկետի ավարտին հետ վերադարձնել սարքավորումը (իր պատկանելիքներով) /մալուխը պատշաճ վիճակում Օպերատորին, եթե համապատասխան սակագնային պլանով այլ բան նախատեսված չէ: Յուրաքանչյուր դեպքում սարքավորումների տրամադրումը Օպերատորի կողմից եւ դրանց հետ վերադարձը իրականացվում է համապատասխան հանձնում-ընդունումը հավաստող ակտով:
31. Բաժանորդը պարտավոր է խստորեն հետեւել Պայմաններին, դրանց փոփոխություններին:
32. Բաժանորդը պարտավոր է զերծ մնալ Ծառայությունների այնպիսի օգտագործումից, որի արդյունքում կարող են խախտվել Օպերատորի կամ այլ անձանց իրավունքները, կամ նրանց կարող է պատճառվել որոշակի վնաս կամ անհարմարություն:
33. Բաժանորդը ամբողջությամբ պատասխանատու է Օպերատորի կողմից նրան տրամադրված ծածկագրերի պահպանության համար, եթե այդպիսիք տրամադրվում են Ծառայությունների շրջանակներում: Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում այն հնարավոր ուղղակի և անուղղակի կորուստների համար, որոնք կարող են ծագել Բաժանորդի կողմից սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով այլ անձանց տրամադրված ծածկագրերի օգտագործման հետևանքով:
34. Բաժանորդը պարտավոր է Օպերատորի պահանջով եւ Օպերատորի կողմից ընդունելի եղանակով ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
- ֆիզիկական անձը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ.
 - իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված իրավաբանական անձի կնիքով (եթե իրավաբանական անձը ունի կնիք), եւ իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի լիազորությունները եւ անձը հաստատող փաստաթղթերը.
 - անհատ ձեռնարկատերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված անձի ստորագրությամբ, եւ անձը հաստատող փաստաթուղթը:
- Անհրաժեշտության դեպքում Օպերատորը կարող է Բաժանորդից պահանջել նաև այլ փաստաթղթեր կամ փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված պատճեններ:
35. Օպերատորի կողմից Պայմանների 33. կետով նախատեսված պահանջված եւ Բաժանորդի կողմից ներկայացված փաստաթղթերում հավաստվող տվյալների փոփոխության դեպքում, Բաժանորդը պարտավոր է ոչ ուշ քան 1 (մեկ) ամսվա ընթացքում հայտնել Օպերատորին:
36. Բաժանորդի մասին տվյալները, նրան մատուցված Ծառայությունների տեսակի, վայրի, ժամանակի եւ ծավալի մասին տեղեկությունները համարվում են գաղտնի եւ չեն բացահայտվում Օպերատորի կողմից, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ դա պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների պաշտպանության համար, այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների գիշման դեպքում:
37. Այլ գրավոր համաձայնության բացակայության դեպքում՝ Օպերատորն իրավունք ունի փոխանցելու Բաժանորդի անհատական տվյալները և պարտքի չափի վերաբերյալ տեղեկությունները ՀՀ-ում գործող բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին՝ Բաժանորդի կամ նրա կողմից լիազորված անձանց կողմից պարտքի չափի ճշտում եւ վճարում կատարելու հնարավորության ստեղծման համար:
38. Բաժանորդը սեփական ռիսկով է օգտվում Օպերատորի եւ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններից: Օպերատորը չի կարող որոշել ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:
39. Չնայած Պայմանների 26. կետով նախատեսված տեխնիկական սպասարկման համապատասխան համաձայնագրով նախատեսվածի, ինչպես նաեւ յուրաքանչյուր այլ դրույթի՝ սահմանված Ծառայությունների հետ կապված կողմերի միջեւ կնքվող եւ/ կամ որոշակի այլ ձեռով համաձայնեցվող ցանկացած փաստաթղթում, յուրաքանչյուր պարագայում, Օպերատորի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Բաժանորդի կողմից փաստացի վճարված միջին ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:
40. Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դա հետեւանք է ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի, այլ բնական աղետի, պատերազմական գործողության, զինված հարձակման, պայթյունի, զանգվածային խռովության, գործադուլի, պետական մարմնի կողմից ընդունված ակտի, մայրուղային ենթակառուցվածքների խթանման, էլեկտրասնուցման կրճատման, հեռարձակող արբանյակների ազդակների որակի անկման կամ թերացած Կողմի վերահսկողությունից դուրս այլ իրադարձության:
41. Կողմերի միջեւ Ծառայությունների մատուցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում եւ մեկնաբանվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության նյութաիրավական նորմերով:
42. Կողմերի միջեւ Ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր փաստաթղթերը կնքվում եւ/ կամ որոշակի այլ ձեռով համաձայնեցվում են հայերեն լեզվով: Բաժանորդի հարմարության համար Պայմանները, ինչպես նաեւ սակագնային պլանները եւ բաժանորդագրության հայտը կարող են թարգմանվել եւ իրապարակվել նաեւ այլ լեզուներով, սակայն նման թարգմանությունների եւ հայերեն տարբերակի միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
43. Կողմերը պետք է ձգտեն լուծել ծագած վեճերը բարյացակամորեն՝ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով: Փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ վեճերն ընդդատյա են Հայաստանի

Հանրապետության իրավասու դատարաններին: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի վեճերի լուծման համար դիմել 46-րդ կետում նշված Օպերատորի գլխամասային գրասենյակի գտնվելու վայրի դատարաններին:

44. Այլ բան սահմանված չլինելու դեպքում, բաժանորդագրության հայտը լրացնելու պահից Ծառայությունների մատուցման պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:
45. Բաժանորդն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունները ստանալուց, միակողմանի լուծելով պայմանագիրը, այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ ժամկետում (ինչը կարող է սահմանվել նաև համապատասխան սակագնային պլանով) գրավոր ծանուցելով Օպերատորին եւ կատարելով վերջնահաշվարկ փաստացի մատուցված Ծառայությունների համար:
46. Ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման դեպքում Բաժանորդը պարտավոր է անհապաղ մարել բոլոր պարտավորությունները Օպերատորի նկատմամբ:

47. Օպերատորի վավերատարերը

«ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերություն
Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան 0015, Արգիշտի 4/1
ՀՎՀՀ 01551651, Հ/հ 247011333330 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում
Վեբ-կայք՝ www.mts.am, www.vivacell.am